

Բ Ա Ր Ե Պ Ա Շ Տ Ա Կ Ա Ն Ն Ո Ւ Է Ր Ն Ե Ր

Շնորհակալությամբ եւ օրհնությամբ կ'արձանագրենք 2016 տարւոյ ընթացքին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին եւ այլ Սրբավայրերու տրուած հետեւեալ բարեպաշտական նուէրները:

- 1. Գոհար Տօնոյեան Սր. Հրեշտակապետաց վանքին կը նուիրէ ոսկի մատանի մը:
- 2. Ջուլիետա Ասատրեան Սր. Հրեշտակապետաց վանքին կը նուիրէ գոյգ մը ոսկի օդեր:
- 3. Տիկ. Մարի Միսիսիան Սր. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Խորանին եւ կողմնակի սեղաններուն կը նուիրէ ճերմակ փուլագարդ ծածկոցներ:
- 4. Հայրենաբնակ Տիկ. Մուսաննա Գրիգորեան, Սր. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի մատանի մը:

(Յունուար)

5. Տիրամայր Լուսինէ Աթաջանեան եւ Մուսկուլայի Հայ Հաւատացեալ Տիկնանց Յանձնախումբը, Սր. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրեն տասնմէկ դեղին ծաղկաւոր շուրջառ՝ առանց ճարմանդի:

6. Հայաստանէն Նունէ Միմոնեան Սր. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ շղթայով Ս. Աստուածածնի փոքր պատկեր մը Մանուկ Յիսուսը ձեռքին եւ շղթայով խաչ մը:

7. Հայրենաբնակ Ալինա Հայրապետեան Սր. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ արծաթեայ մատանի մը՝ ոսկի շրջանակով եւ թանկագին քարով:

(Ապրիլ)

8. Կ. Պոլիսէն Օրթագիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղային խորհուրդը Սր. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրեն խոշոր փարչ եւ կոնք՝ հետեւեալ յիշատակարանով. «Յիշատակ է շնիչս եւ կոնքս ի վայելումն Ս. Յակոբեանց Մայրավանքին.- խնդրակատար Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղային խորհուրդէն, Օրթագիւղ - Կ. Պոլիս, Յունիս, 2016»:

9. Կ. Պոլիսէն Օրթագիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հաւատացեալներ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի երկու Ս. Սեղաններու կը նուիրեն ճերմակ ծածկոցներ:

10. Կ. Պոլիսէն Տիար Մկրտիչ Մերթշիմշէք Սր. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ 90 ոսկեգօծ ճարմանդ:

(Յունիս)

11. Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրս Սր. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին կը նուիրէ ասեղնագործ գորփուրայ մը՝ կարմիր մետաքսէ յատակի վրայ:

(Յուլիս)

12. Տիար Վարդան Մինասեան Սր. Յակոբեանց Մայր Տաճարի Սր. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի շղթայով խաչ մը:

13. Յասմիկ Ագարեան Սր. Յակոբեանց Մայր Տաճարի Սր. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի խաչ մը:

14. Ամերիկայի Ուոթերթաուն քաղաքի Սբ. Յակոբ եկեղեցւոյ Թադական Ծուխը Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ 17 արծաթեայ ճարմանդ:

15. Կ. Պոլիսէն Փայլուն Սաթըլմիշ, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ ՄՅ գրութեամբ արծաթեայ խոշոր բոժոժներ:

(Օգոստոս)

16. Ս. Աթոռոյս Միաբաններէն Հոգշ. Տ. Պարետ Ծ. Վրդ. Երեցեան, Յոպպէի Հայոց Ս. Նիկո դայոս վանքին կը նուիրէ լման պատարագիչի զգեստ մը՝ սաղաւարտով եւ վակասով միասին:

17. Մաֆալիէն Տիկ. Գայիանէ Յարութիւնեան Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ շղթայով խաչ մը եւ ոսկի ականջօղեր՝ ադամանդէ քարերով:
(Նոյեմբեր)

18. Մի ոմն Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ ձեռաց խաչի երեսուն բռնիչ:

19. Հայաստանէն ժամանած ուխտաւոր Տիկ. Անահիտ Խաչատրեան Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ պզտիկ արծաթեայ խաչ մը:
(Դեկտեմբեր)

ՍԵԻՎՆ ԱՐՔ. ՂԱՐԻՊԵԱՆ
Լուսարարապետ Ս. Աթոռոյ

ԵՐԱՆԻ՝ ՈՐ ՈՒՆԻՅԻ ՅԻՇԱՏԱԿ Ի ՍԻՈՎՆ

